ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ.հոկտեմբերի 2 -ին, N 472 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետով, 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, 105-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասով, 188-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Լ. Պետրոսյանի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի դիմումն ու անաշխատունակության թերթիկը /սերիա՝ ZZ N 220838/ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Վարդենուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիանա Պետրոսյանին 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի փետրվարի 17-ը ներառյալ համարել հղիության և ծննդաբերության արձակուրդի մեջ:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Վարդենուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել դպրոցի տնօրենի տեղակալ Յուլիանա Լավրենտի Յաղուբյանի վրա մինչև հիմքի վերացումը:

3.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Վարդենուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Յուլիանա Յաղուբյանին բացի աշխատավարձից հատկացնել լրավճար վերջինիս և տնօրենի դրույքաչափի նկատմամբ հաշվարկված տարբերության չափով

02.10.2024

X

VERIFIED OCSP 02.10.2024 12:34:00 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ